ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԵՎԱԾԱԳ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արևածագի համայնք, փողոց 3, շենք 1 հեռ. 094156328
«21» փետրվարի 2013թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում Արևածագ համայնքի 2013 - 2016 թթ. զարգացման քառամյա ծրագիրն առդիր 18 /տասնութ/ էջով:

Արևածագի գյուղապետ՝ /Ա.Մարգսյան/

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ • ԱՐԵՎԱԾԱԳԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ • 06601005

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
«» 20 թ.
Մուտք թիվ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԱՐԵՎԱՇԱԳԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Ս. Սարգսյանը

Հաստատվել է համայնքի ավագանու 19.02.2013թ. թիվ 5 որոշումով

2013 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ է քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները
6. Գյուղատնտեսության ցուցանիշները

Հավելված-1 Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը

Հավելված-2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը

Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրն այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը: Խնդիրն այստեղ տեղի նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների ու դրանց համակցման պոտենցիալ հնարավորությունների գնահատման, առկա հիմնախնդիրների վերհանման, սոցիալական և տնտեսական երևույթների կանխատեսման, համայնքի ուժեղ և թույլ կողմերի բացահայտման ճանապարհով համայնքի մասին ամբողջական պատկերացումն է ու այստեղից էլ՝ համայնքի ընթացիկ և հեռանկարային զարգացման նպատակային ուղղությունների սահմանումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արևածագ գյուղը վերաբնակեցվել է1843թ.-ից: Գյուղն ավելի հին է, քան ենթադրվում է, որի վկայությունն են գյուղի տարածքում և շրջակայքում գտնվող բազմաթիվ մատուռներն ու խաչքարերը:

Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1160մ բարձրության վրա, Հայաստանի Հանրապետության հյուսիս արևելյան մասում: Համայնքը մարզկենտրոն Վանաձորից հեռու է 60կմ, իսկ նախկին շրջկենտրոն Ալավերդուց 25կմ: Այն շրջապատված է դաշտերով, իսկ հարավային կողմից ձորով: Գյուղի կլիման ձմռանը մեղմ է, ամռանը՝ շոգ:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում փաստացի ապրում են 791 բնակիչ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 48%-ը /տղամարդ 377 հոգի, կին 414/: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է.

1. երեխաներ (0-6տ)	66
2. դպրոցականներ(7-17տ)	139
3. 18-62 տարեկաններ	462
4. թոշակառուներ /62 տարեկանից բարձր մարդիկ/	124
5. հաշմանդամներ	15
6. աշխատունակներ	572
7. 4 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների թիվը	3
8 ընտրողների թիվը	630

Գյուղն ունի 223 տնտեսություն, այդ թվում առկա 203: Տնտեսություններից 18-ն ընգրկված են «Փարոս» համակարգում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը ղեկավարվում է համայնքի ղեկավարի (գյուղապետի) կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: 2012թ. սեպտեմբերի 9-ին գյուղապետ է ընտրվել Սամվել Ալավերդու Սարգսյանը, որն ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

- գյուղապետ -1 դրույք
- գյուղապետի տեղակալ - 1 դրույք
- աշխատակազմի քարտուղար - 1 դրույք
- գլխ. հաշվապահ, 1-ին կարգի մասնագետ -1 դրույք
- աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ - 2 դրույք
- հավաքարար – 1 դրույք
- բանվոր – 1 դրույք
- օպերատոր - 1 դրույք

Համայնքում կա մշակույթի տուն և գրադարան, որտեղ աշխատում են գյուղապետարանի երկու 1-ին կարգի մասնագետ համայնքային ծառայողներ:

Համայնքի ենթակառույցներից է "Արևածագի նախադպրոցական ուսումնական հաստատություն" ՀՈԱԿ-ը, որտեղ աշխատում է երկու հոգի:

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 11 հոգուց: Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով (տես հավելված 2)

- մշակույթի տուն 1 միավոր
- վարչական շենք 1 միավոր
- ջրմուղի ցանց 1 միավոր

Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացավ: Ակումբի և գրադարանի գույքը շատ հին է, բարոյապես և ֆիզիկապես մաշված, ամբողջովին ենթակա է դուրս գրման: Գյուղապետարանի գույքը որոշ չափով թարմացվել է, բայց այժմ կարիք կա համակարգչային տեխնիկայի ձեռք բերման և գյուղապետարանի դահլիճի կահավորման: Օրակարգային հարց է դարձել ակումբի սենյակների և գրադարանի կահավորումն ու համապատասխան գույքի գնումը: Ֆիզիկապես և բարոյապես մաշվելու, նոր տեխնիկայով չփոխարինվելու հետևանքով անմխիթար վիճակում են համայնքի գյուղ տեխնիկան և գործիքները: Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1958թ-ին, որի մաշվածությունն այնքան մեծ է, որ ջրի կորուստը հասնում է 40%-ի: Անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը և վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը:

Ճանապարհային ցանցը նույնպես շտապ վերանորոգման կարիք ունի: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել շուրջ 8 կմ ճանապարհ և փողոց:

[illegible] թիվը տարեցտարի աճում է: Աստիճանաբար աճ է

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում հիմնականում զբաղվում են կարտոֆիլի, հացահատիկի և բանջարեղենի արտադրությամբ: Այս արտադրությունը կախված է բնության քմահաճույքից: Նորմալ տարիներին որոշ չափով դեռ կարելի բերք հավաքել, իսկ երաշտի կամ շատ անձրևային տարիներին գյուղացին կորցնում է բերքի մեծ մասը: Չնայած այդ ամենին, գյուղացիները շատ համախմբված և եռանդով են լծված գյուղատնտեսական աշխատանքներին, և համայնքը մարզի այն եզակի համայնքներից մեկն է, որտեղ չկա ոչ մի թիզ անմշակ հող: Համայնքի բնակիչները մինչև վերջին լուման ներ են դնում դաշտավարության մեջ, պարարտանյութ և դիզելային վառելանյութ գնելու համար բանկերից վարկեր վերցնում:

Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Եղանակային անբարենպաստ տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում: Խոտի անբավարարվածության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը: Տարեցտարի աստիճանաբար համայնքում ավելանում է խ.ե.անասունների և խոզերի գլխաքանակը, գյուղացին կարողանում է դաշտից կրած կորուստը հատուցել անասնապահությամբ, կամ անասնապահության վնասները հատուցել դաշտի բերքով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, որը նույնպես վերանորոգման կարիք ունի: Այնտեղ սովորում է 167 աշակերտ: Դպրոցն ունի 33 աշխատատեղ /22 ուսուցիչ/, մեկ ուսուցչին ընկնում է 8 աշակերտ:

Դպրոցին կից գյուղապետարանի և համայնքի բնակիչների օժանդակությամբ ստեղծվել և գործում է նախակրթարան, որտեղ հաճախում են համայնքի չորսից հինգ տարեկան մոտավորապես քսան երեխա:

ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախկինում շատ անմխիթար վիճակում գտնվող համայնքի մշակույթի տունը մարզպետարանի և գյուղապետարանի միջոցներով մասամբ վերանորոգվեց, այժմ կարիք կա մի քանի սենյակների վերանորոգման և կահավորման ու անհրաժեշտ գույքի ձեռք բերման: Գործող գրադարանը ևս գտնվում է մշակույթի տան շենքում, ունի շուրջ 8749 անուն գիրք, գրքային ֆոնդը նորմալ վիճակում է, միայն կարիք կա սենյակների վերանորոգման, գրքային ֆոնդի թարմացման: Համայնքում կա ֆուտբոլի դաշտ, երիտասարդներն ազատ ժամանակ զբաղվում են այնտեղ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է վերանորոգված և կահավորված ամբուլատորիա, որն սպասարկում է շրջակա երեք համայնքների ևս: Այն գտնվում է գյուղապետարանի շենքի առաջին հարկում: Կարիք կա միայն ջեռուցման համակարգի կառուցման: Ամբուլատորիայում կա 8 աշխատատեղ, Արևածագ համայնքում աշխատում են մեկ բժիշկ և երկու բուժքույր, իսկ հարևան համայնքներում՝ մեկական բուժքույր:

Գյուղի առողջապահական և սանիտարահիգիենիկ վիճակը բավարար է:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքն ունի ԲՈՒՀ - երի ավելի քան 76 շրջանավարտ տարբեր մասնագիտությունների գծով, որոնք կարողանում են կազմակերպել կրթության ու դաստիարակության,մշակութային և շինարարական աշխատանքներ
- Գյուղն ունի բերրի վարելահողեր, որի լավ մշակման դեպքում գյուղացիներն ստանում են բարձր բերք, բերքահավաքի ժամանակ կարիք է լինում նոր աշխատողների ներգրավման մոտակա համայնքներից:
- Գյուղն ունի գեղատեսիլ ձոր, որով հոսում է Ձորագետը: Դա հնարավորություն կտա զարգացնել զբոսաշրջությունը և կառուցել հանգստի գոտիներ:
- Գյուղում և ձորում գործում են քարի վերամշակման արտադրամասեր
- Ձորում գործում է Ձորահէկ-ի գլխամասային հանգույցը, որտեղ աշխատում են համայնքի շուրջ տասը բնակիչներ

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ճանապարհների, խմելու ջրի և ոռոգման ցանցերի վատ վիճակը
- Մահացության ավելացում և ծնելիության նվազում
- Արտագնա աշխատանքի մեկնողների թվի մեծացում
- Գործազրկություն
- Հողերի բերքատվության նվազման հետ կապված գյուղացու եկամուտների նվազում

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ աշխատուժի առկայություն
- Մշակության համար պիտանի վարելահողերի առկայություն
- Գյուղն ունի գեղեցիկ բնաշխարհ, շատ գեղեցիկ ձոր, որը հարմար է հանգստյան տներ հիմնելու համար

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորգման անհրաժեշտությունը
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները խանգարում են համայնքի բյուջեի կատարմանը
- Վարելահողերի ոռոգման համար խիստ անհրաժեշտ է ոռոգման ցանցի վերանորոգումը

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում
- Համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը

3.ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1
ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ներածություն

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1958թ.: Ջրագծի երկարությունը կազմում է շուրջ 4.5 կմ:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին տարիներին տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով շարքից դուրս են եկել մոտ 50 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բացի վերանորոգման ենթակա ջրագծերից պետք վերանորգվի նաև գյուղի ջրամբարը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են.

- Հիմնովին փոխել գյուղի խմելու ջրի ջրագիծը
- Ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով
- Նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները
- Երաշտի տարիներին համայնքի բնակիչների տնամերձ հողամասերի բանջարա-բոստանային կուլտուրաները փրկել երաշտից

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

- Կնքել պայմանագիր Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ, որի համաձայն ծրագրով պահանջվող գումարի 85 %-ը կհատկացվի հիմնադրամի կողմից, իսկ 15%-ը համայնքի բյուջեից և համայնքային ներդրումներից

- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- Հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող կապալառու շին կազմակերպությունը
- Ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ
- Կազմել ԾԻԳ համայնքի անդամներից՝ կատարվող աշխատանքները վերահսկելու համար

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, համայնքն 90%-ով կապահովվի շուրջօրյա խմելու ջրով, կնվազեն խմելու ջրի կորուստները, ներկայիս 50%-ից հասնելով 0-5%-ի, կբարելավվեն նաև գյուղի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախնական մոտավոր հաշվարկներով 4.5 կմ երկարությամբ ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 30 հազար ԱՄՆ դոլար:

<u>ԾՐԱԳԻՐ 2</u>

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ, ԳՐԱԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ , ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ԵՎ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի մշակույթի տունն ու գրադարանը ունեն շուրջ 50 տարվա ատմություն: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ համայնքի բնակիչները չունեն աշխատանքից ազատ ժամերին հանգստանալու և զբաղվելու վայր, իսկ երեխաներն էլ խաղալու տեղ: Մշակույթի տան սենյակները ու գրադարանի շենքը գտնվում են անմխիթար վիճակում, շատ շտապ վերանորոգման կարիք ունեն: Գրադարանի վերանորոգումով էլ կստեղծվեն նորմալ աշխանքային պայմաններ աշխատողի և հաճախորդների համար:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակներն են.

- Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը
- Տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկույթներ
- Տրամադրել խաղասենյակներ շախմատի, նարդու և այլ խաղերի համար
- Գրադարանի աշխատանքի համար ստեղծել նորմալ աշխատանքային պայմաններ
- Համայնքի երեխաների համար ստեղծել խաղահրապարակ

Ծրագրերն իրագործելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- Համայնքի վարչական և ֆոնդային բյուջեի մուքերի հաշվին հավաքագրել որոշակի գումար
- Կազմակերպել բարերարների, դոնոր կազմակերպությունների և համայնքի կողմից ներդրումների հարցը
- Ակումբի շենքում կատարել ներքին հարդարման աշխատանքներ և ապահովել գույքով
- Երեխաների համար ակումբի շրջակա տարածքում կառուցել խաղահրապարակ
- Ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ

ԾՐԱԳՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Բնակչության ազատ ժամանակն ավելի հետաքրքիր ու արդյունավետ անցկացնել
- Ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների կրթական և հոգևոր զարգացման համար
- Երեխաների համար ապահովել խաղալու անհրաժեշտ պայմաններ
- Համայնքային ծառայողների համար ստեղծել նորմալ աշխատանքային պայմաններ

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ներածություն

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 8.0 կմ-ից ավելի: Մայրուղուց մինչև գյուղ մտնող ճանապարհն ասֆալտապատ է՝ շատ անմխիթար վիճակում: Գյուղամիջյան փողոցներից և ոչ մեկը նորմալ վիճակում չի գտնվում: Բնակչության դիմումներին ընդառաջելով, սույն ծրագրով առաջարկվում է ասֆալտապատել գյուղի կենտրոնական ճանապարհները և բարեկարգել միջհամայնքային և ներհամայնքային մյուս փողոցները:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է

- Ապահովել տրանսպորտային բոլոր միջոցների բավարար երթևեկության պայմաններ տարվա բոլոր եղանակներին
- Գյուղի փողոցները դարձնել երթևեկելի, վերացնել փողոցների ջրափոսերը

Ծրագրի խնդիրները

- Համագործակցելով ՄԱԿ-ի «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի հետ, կազմել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նախագծա-նախահաշվային փաստաթղթեր
- Կատարել ավազի, խճաքարի և կավի խառնուրդի փռում համայնքի կենտրոնական փողոցներում՝ ապագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքներ
- Համագործակցել Թումանյանի տարածաշրջանի ճանապարհաշինարարական հիմնարկությունների հետ համատեղ ուժերով լուծելու ճանապարհների վերանորոգման աշխատանքները
- Աշխատանքները կատարելու համար օգտագործել համայնքի ակտիվ ուժերը, շեշտը դնելով շահագրգիռ ուժերին այդ աշխատանքներին ակտիվ ներգրավելուն
- Աշխատանքները կազմակերպել 2014-2015թթ ընթացքում

ԾՐԱԳԻՐ 4

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ներածություն

Համայնքի բնակիչները արարողությունների ժամանակ կանգնում են որոշակի դժվարությունների առջև կապված տեղի հետ, բնակարանները փոքր են, իսկ մեծ դահլիճ էլ համայնքում չկա: Այդ պատճառով անհրաժեշտ է գյուղում կառուցել մեծ սրահ և կահավորել այն համապատասխան գույքով:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է

- Ապահովել համայնքի բնակիչներին կահավորված մեծ սրահով
- Այդ դահլիճը տրամադրել հարսանյաց արարողությունների, տխրությունների, ավագանու նիստերի, համայնքի ընդհանուր ժողովների և այլ միջոցառումների անցկացման համար
- Նպաստել համայնքի սոցիալ-կուլտուրական զարգացմանը

Ծրագրի խնդիրները

- Համայնքի վարչական և ֆոնդային բյուջեի մուքերի հաշվին հավաքագրել որոշակի գումար
- Կազմակերպել բարերարների, դոնոր կազմակերպությունների և համայնքի կողմից ներդրումների հարցը
- Ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ
- Հավաքագրել կամավոր աշխատողներ կատարվելիք աշխատանքների համար
- Աշխատանքները կատարելու համար օգտագործել համայնքի ակտիվ ուժերը, շեշտը դնելով շահագրգիռ ուժերին այդ աշխատանքներին ակտիվ ներգրավելուն
- Աշխատանքները կազմակերպել 2014-2016թթ ընթացքում

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Լոռու մարզի Արևածագ համայնքի գյուղապետարանի ֆինանսական վիճակն ունի հետևյալ պատկերը

Հ/Հ	Եկամուտի տեսակը	2010թ. փաստացի	2011թ. փաստացի	2012թ. փաստացի.	2013թ. կանխ.	2014թ. կանխ.
	Եկամուտներ Ընդամենը	14470.4	12763.3	10542.4	12802.6	12906.0
Ա	Հարկային եկամուտներ	7473.3	6452.9	4061.7	5817.8	5950.0
1	Հողի հարկ	6951.1	5977.0	3523.7	4792.8	4800.0
2	Գույքահարկ	522.2	475.9	538.0	1025.0	1150.0
Բ	Տուրքեր	56.0	183.0	127.5	108.0	106.0
Գ	Ոչ հարկային եկամուտներ	2372.4	1821.0	2345.0	1683.4	1650.0
1	Պետ պահուստային հողերի վարձավճար	552.2	1387.0	2186.9	1563.4	1500.0
2	Գույքի վարձավճարներ					
3	Պատվիր.լիազ.կատարում	600.0	300.0			
4	Այլ ոչ հարկային եկամուտ	1220.2	134.0	158.1	120.0	150.0
Դ	Պաշտոնական տրանսֆերտներ, դոտացիա	4568.7	4306.4	4008.2	5193.4	5200.0
Ե	Ֆոնդային բյուջեի մուտքեր /մնացորդ/	529.0	945.0	50.9	59.0	59.0

5.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հ/Հ	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Չափի միավոր	2010թ. փաստացի	2011թ. փաստացի	2012թ. փաստացի.	2013թ. կանխ	2014թ. կանխ.
	1	2	3	4	5	6	7
1	Համայնքի տարածքը	հա	956.0	956.0	956.0	956.0	956.0
2	Բնակչության թիվը	մարդ	792	795	782	791	800
3	Ծնունդը	մարդ	10	8	9	12	11
4	Մահացությունը	մարդ	6	8	10	6	8
5	Աշխ. ռեսուրս.	մարդ	565	567	578	582	596
6	Գործազրկ.մակարդակը	%					
7	Առևտրի և սննդի օբյեկտների թիվը	հատ	4	3	3	3	4
8	Պահուստ. վ-հողեր	հա	64	64	64	64	64
9	Պահուստ.հողերի օգտագ. մակարդ	%	60	78	95	100՝	100՝
10	Խմելու ջրի ներհամ. ցանցի երկարութ.	կմ	3.0	4.0	4.5	5.0	5.0
11	Ներհամ.ոռոգման ցանցի երկարութ.	կմ	4.0	4.0	4.0	5.0	5.0
12	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	420	420	420	430	430
13	Ներհամ.փողոց.և ճանապ.երկարութ.	կմ	3.5	3.9	4.5	5.0	5.0
14	Չբարեկարգված փողոց.և ճան.երկարութ	կմ	3.5	3.1	2.5	2.0	2.0
15	Մասնավոր բնակ.ֆոնդ	հզ.քմ	17.0	17.8	17.8	18.5	18.5
16	Բնակկարիքավոր ընտանքների թիվը	հատ	18	10	8	8	6
17	1 շնչին ընկնող ջրի սպառումը	1/օր	100.0	110.0	150.0	200.0	200.0
18	Ջրի կորուստը ցանցում	%	50.0	42.0	28.0	10.0	10.0
19	Սովորողների թիվը հանրակ. դպրոցում	181	185	170	175	167	178
20	Երեխ թիվը մանկ-ում						
21	Գյուղապ-ի և ենթակառ. աշխատող. թիվը	մարդ	9	9	9	9	10

6.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1.Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը	223 այդ թվում՝
ա/ անհատական կոլեկտիվ տնտեսություն	223

2.Գյուղ արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը 2012թ. տվյալներով

ա.կարտոֆիլ	18945 g
բ.հացահատիկ	8780 g
գ.բանջարեղեն	97 g
դ.միրգ	90 g
ե.խոտ	3900 g
զ.ծղոտ	3500 g
է.կաթ	3650 g
ը.միս	270 g
թ.բուրդ	0.7g
ժ.ձու	185 հազ.հատ
ի.մեղր	36 g

3.Ցանքատարածությունները	հա
ա.կարտոֆիլ	126
բ.հացահատիկ	300
գ.խոտ	86
դ.բանջարեղեն	2
ե.եգիպտացորեն	8

4.Անասնագլխաքանակը	*հատ*
ա.խոշոր եղջերավոր անասուններ	621
այդ թվում կովեր	298
բ.մանր եղջերավոր անասուններ	50
այդ թվում մայրեր	44
գ.խոզեր	276
այդ թվում մայրեր	43
դ.թռչուններ	1720
այդ թվում հավեր	1471
ե.մեղվաընտանիքներ	91
զ.բանող անասուններ	19

5. *Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը* /հատ/

ա.թրթուրավոր տրակտորներ	18
բ.անիվավոր տրակտորներ	17
գ.հացահատիկի կոմբայն	2
դ.տրակտորային կցասայլեր	13
ե.գութաններ	10
զ.կուլտիվատորներ	10
է.շարքացաններ	2
ը.կարտոֆիլ ցանիչներ	4
թ.խոտի մամլիչներ	1
ժ.բեռնատար ավտոմեքենաներ տարբեր մակնիշների	24
ի.հատիկազտիչ մեքենաներ	2

Համայնքի ղեկավար՝ /Ս.Սարգսյան/